ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳԵՂԱՐԴ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՈՐ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 ապրիլի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց.
Քանզի մարդով եղեւ մահ, եւ մարդով՝ յարութիւն մեռելոց:
Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին.
նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին»
(Ա. Կոր. ԺԵ. 20-23):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, հավատացյա՛լ ժողովուրդ, ահա մենք օրեր առաջ մեծ ոգեւորությամբ տոնախմբեցինք մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հարությունը, որը մեր փրկությունն է եւ ճանապարհը դեպի հավիտենություն, երկնքի արքայություն: Եվ մենք այդ օրը կոչում ենք Զատիկ: Մեր Եկեղեցում Զատկին հաջորդող՝ Հինանց շրջանի այս առաջին կիրակին կոչում ենք Կրկնազատիկ կամ Նոր կիրակի. ի՞նչ խորհուրդ ունի այս կիրակին:

Սիրելինե՛ր, այս կիրակին նոր է անվանվում, որովհետեւ Քրիստոսի խաչելությամբ եւ հարությամբ մեր կյանքը նորոգվեց, նոր ճանապարհ ընդունեցինք՝ կործանումից դեպի փրկություն, նոր լույս ծագեց մեր վրա՝ փրկության հույսը: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Այլեւս ծառաներ չեք, այլ որդիներ եւ ժառանգներ Աստծու» (Հմմտ. Գաղ. Դ. 7), հետեւաբար այս կիրակին Նոր կոչելով՝ ի նկատի ունենք մեր նոր կյանքը: Իսկ Կրկնազատիկ անվանումով ի նկատի ունենք մեր մեղքերից, մեր մարմնավոր կրքերից ազատումը, քանզի առաջին՝ Հարության կիրակին

Քրիստոս խաչի վրա իր մահով, իր թափած արյունով մաքրեց մեր մեղքերը եւ հարություն առավ՝ շնորհ տալով մեզ փրկվելու՝ ըստ հոգու եւ հավատքի: Սակայն այս կիրակին մեր մարմնական կրքերից նորից զատվելու, ազատվելու կիրակի է, ցանկություններից եւ այն ամենից, ինչը ծանրաբեռնում է մեր մարմինը: Ահա դրա համար Կրկնազատիկ, Նոր կիրակի՝ նոր մարմին, նոր կյանք եւ ազատում մեղքերից ու կրքերից:

Սիրելինե՛ր, Քրիստոս պատվիրեց մեզ. «Սիրե՛ք եւ ներե՛ք միմյանց»: Աստված ասում է. «Սիրե՛ք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, մաքրվեցե՛ք ձեր մեղքերից, առե՛ք լույսը, լո՛ւյս եղեք աշխարհի համար եւ գթասիրտ ու հոգատար միմյանց նկատմամբ, լցվե՛ք սիրով դիմացինի եւ Աստծու նկատմամբ եւ ապրեք հավատքով» (հմմտ. Հովհ. ԺԳ. 34-35):

Ահա սա է մեր կոչը, մեր պատգամը: Այս Նոր կիրակին տոնախմբենք հոգու ուրախությամբ եւ բերկրանքով, քանզի ազատվեցինք մեր մեղքերից եւ նոր կյանք վերցրինք Քրիստոսով եւ թոթափեցինք մեր հին կյանքի մեջ եղող մարմնի կրքերն ու ցանկությունները: Եվ սկսեցինք նոր կյանքով ապրել, նոր ճանապարհով ընթանալ, որտեղ կարեւորվել են սերը, խաղաղությունը, առաքինի ու բարի գործերը: Ահա ինչին մենք կոչվեցինք: Օրեր առաջ Քրիստոսին փառաբանեցինք՝ ասելով. «Տե՛ր, դու ես իմ Փրկիչը, եւ քեզնով է իմ փրկությունը» եւ հոգեւոր խանդավառությամբ միմյանց ողջունեցիք՝ ասելով. «Քրիստոս հարություն առավ իմ եւ քո համար, որպեսզի մենք եւս փրկվենք»: Եւ ահա մեր կյանքը պետք է ապրենք այնպես, ինչպես Քրիստոս է կամենում, որպեսզի երբ գա ժամանակը, բախենք երկնքի արքայություն դուռը՝ ասելով. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց ինձ քո ողորմության դուռը» (շարական), Աստված ներսից չգոչի եւ ասի՝ «Ո՞վ եք դուք, ես ձեզ չեմ ճանաչում», այլ բացի իր փառքի դռները եւ ասի՝ «Արի՛ եւ քո խաղաղությո՛ւնը գտիր իմ թագավորության մեջ, բարի՛ եւ հավատարի՛մ ծառա» (հմմտ. Մատթ. ԻԵ. 23):

Սիրելինե՛ր, թող Տիրոջ ողորմությունը, շնորհը, Ս. Հոգին միշտ զորացնի ամենքիս, որպեսզի կարողանանք այդ նոր կյանքը՝ զերծ մեղքերից եւ կրքերից, հարատեւ պահենք, հնազանդվենք Տիրոջ խոսքին, պահենք Նրա պատվիրանները եւ ի կատար ածենք:

Շնորհ, սէր Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն: